# ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ 1915—1916 թթ.

Ռ. Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության հայաբնակ այլ վիլայեթներում հայության սոցիալ-քաղաքական վիճակն ավելի բարդացավ։ Յուրացնելով Աբդուլ Համիդի հայահալած քաղաքականությունը և ժառանգելով նրա քաղաքական գործելակերպը, երիտթուրքերը շատ շուտով հրաժարվեցին Թուրքիայի ողջ ազգաբնակչության ազատության, հավասարության և եղբայրության կարգախոսներից՝ որդեգրելով պանթուրքիզմի ռազմատենչ քաղաքականությունը։

Երիտթուրքական կուսակցությունը և թուրք ազգային բուրժուազիան հետամուտ էին ոչ թուրք, մասնավորապես քրիստոնյա ժողովուրդների տնտեսական և մշակութային գերազանցության ոչնչացմանը։ Դա գլխավորապես ուղղված էր հայերի դեմ, քանզի նրանք այն ժողովուրդներից էին, որոնք իրենց ձեռքում էին պահում «կայսրության բովանդակ տնտեսական ուժը»[1], և թուրք ազգային բուրժուազիայի մոլեռանդ տրամաբանությամբ տնտեսական առավելությունն ու հզորությունը հայերից խլելու հնարավոր միակ միջոցը վերջիններիս ֆիզիկական ոչնչացումն էր։

Հայերի ցեղասպանությունը հասունանում էր XIX դ. վերջին քառորդից, երբ միջազգային դիվանագիտության խնդիր դարձած Հայկական հարցը եվրոպական պետությունների կողմից Թուրքիայի վրա դիվանագիտական և քաղաքական ճնշման բազմաթիվ առիթներ էր ստեղծում։ Եվ ահա, Հայկական հարցը մեկընդմիշտ լուծելու համար երիտթուրքերը որոշեցին օգտագործել պատեհ առիթը՝ առաջին աշխարհամարտը։ Համոզված լինելով, որ օտարերկրյա միջամտություններն այս անգամ բացառված են և, օգտվելով Գերմանիայի աջակցությունից, նրանք որոշեցին ամբողջ աշխարհը կանգնեցնել կատարված փաստի առաջ։ Խաղալով թուրք ժողովրդի ազգային զգացմունքների հետ, «Միություն և առաջադիմություն» երիտթուրքական կոմիտեն բորբոքում էր դրանք՝ հայ ժողովրդին ներկայացնելով որպես դավաճանի, որն անցնում է Ռուսաստանի կողմը և թիկունքից հարվածում Օսմանյան կայսրությանը, որպես ատելի տարրի, որն իր ձեռքն է վերցրել Թուրքիայի ողջ հարստությունները և շահագործում է ժողովրդին, որպես մի խոշընդոտի, որը սեպի պես խրվել է մահմեդական աշխարհում և խանգարում է համաթուրանական լայնածավալ կայսրության ստեղծմանը։ Ուստի, թուրք ժողովրդի «կենսական շահերը» պահանջում են ոչնչացնել հայերին։ Ինչպես նշել է անգլիացի հայտնի գիտնական Դ. Լենգը, Ստամբուլից մինչև Սամարղանդ ընկած Մեծ Թուրանի ստեղծմանը խոչընդոտում էին երեք միլիոն հայերը, որոնց «ոչնչացումը երիտթուրքական քաղաքականության գլխավոր խնդիրն էր»[2]։

1915 թ. սկզբին գործի անցավ իթթիհատի «հատուկ կազմակերպությունը» (Թեշքիլյաթե մահսուսի-ե), որի վրա էր դրված ցեղասպանության անմիջական գործադրությունը, իսկ ապրիլի 15-ին Թալեաթի, Էնվերի և Նազիմի ստորագրությամբ տեղական իշխանություններին ուղարկվեց ջարդերի գաղտնի հրամանը։ Ադանայի և Հալեպի վիլայեթների, Կիլիկիայի ու Սիրիայի

---

[1] Դեսպան Մորգենթաուի պատմածները, Կ. Պոլիս, 1919, էջ 282։

[2] D. M. Lang. The Armenians, A People in Exile, London. 1980, p. 57.

հայության տարագրությունը և ջարդերը հանձնարարվում է Օսմանյան Թուրքիայի եռապետության անդամ, ծովային նախարար և 4-րդ զորաբանակի հրամանատար Ջեմալ փաշային, որը, ինչպես նկատել է Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպան Հ. Մորգենթաուն, ներկայացնում էր «ան ձգտումը, որուն ազդեցությունը արագորեն պարտադրվեցավ կառավարական քաղաքականության, ատ ձգտումը համիսլամությունն էր. Ճեմալ... կը բաղձար թրքացնել ամբողջ կայսրությունը»[3]։

Եղեռնից հետո և՛ երիտթուրքերը, և՛ թուրք քաղաքական գործիչները, պատմաբանները ժխտել և ժխտում են հայկական կոտորածների փաստը, մերժում են նրա ծրագրված և կազմակերպված լինելը, ուղղակի հայտարարելով, որ, ելնելով պատերազմական, ռազմական շրջանի հրամայական պահանջների անհրաժեշտությունից, կառավարությունը պետության անվտանգությունն ապահովելու նպատակով տեղահանել է ռուս-թուրքական սահմանագլխին բնակվող և ռուսներին համակրող հայ ազգաբնակչությանը և ուրիշ ոչինչ։ Միանգամայն այլ հարց է, որ ճանապարհի դժվարություններից, սովից, հիվանդություններից և ինչ-ինչ զրկանքներից զոհեր են եղել։ Սակայն այս ցինիկ և սին գրույթը հօդս է ցնդում թեկուզ Կիլիկիայի օրինակով, որը, գտնվելով Միջերկրական ծովի ափին, հարյուրավոր կիլոմետրերով հեռու էր կովկասյան ռազմաճակատի թատերաբեմից։

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Կիլիկիայում հայերի թիվը 400.000 էր[4]։ Ինչպես այլուր, այնպես էլ Կիլիկիայում պատերազմ հայտարարելուց հետո սկսվեց զորահավաք և 21—45 տարեկան բոլոր հայ տղամարդիկ զորակոչվեցին։ Դժվար չէր հասկանալ, որ սա հետապնդում էր հայությունը կռվող ուժից զրկելու նպատակ։ Ապա թուրքական կառավարությունը պատերազմական ժամանակի, ռազմական դրության և բանակի կարիքները հոգալու պատրվակով սկսեց բռնագրավել հայերի ողջ գույքը, առաջին հերթին զենքերը, ապա անասունները, սնունդը և այլն։ Ընդսմին, այդ գործողություններն ուղեկցվում էին ահավոր բռնություններով։ Հ. Մորգենթաուն նկատել է, որ «խողխողելե առաջ հարկ էր առնել անոնցմե պաշտպանության բոլոր միջոցները»[5]։

Երիտթուրքերի կառավարությունը տարագրությանն ու զանգվածային կոտորածներին Կիլիկիայում ձեռնամուխ եղավ շատ ավելի վաղ, քան Արևմտյան Հայաստանում և հայաբնակ այլ շրջաններում։ Տեղահանությունը սկսվեց Զեյթունից։ Դա ուներ իր հիմնավոր դրդապատճառները։ Հայտնի է, որ թուրքական կառավարությունը միշտ էլ մասամբ երկյուղել է ընդհանրապես Կիլիկիայի, մասնավորապես Զեյթունի, ազատաբաղձ և մարտնչող հայության ընդվզումներից։ Բացառված չէր, որ եթե սկզբում տեղահանություններ և ջարդեր տեղի ունենային Կիլիկիայի այլ վայրերում, ապա Զեյթունն անտարբեր դիտորդի դերում չէր մնա։ Ողջ Կիլիկիայի անառիկության գաղափարը կապված էր Զեյթունի անպարտելիության մտքի հետ։ Օսմանյան կառավարությունը զգալի ուժեր տրամադրեց Զեյթունի տեղահանությունն իրականացնելու համար և գոնե սկզբնական շրջանում գործում էր մեծ զգուշությամբ, դիմում բազմաթիվ խորամանկությունների։ Զեյթունի պարպումը, որը փաստորեն սկսվել էր 1914 թ. սեպտեմբերին, ավարտվեց 1915 թ. մայիս-հունիս ամիսներին։ Ընդ որում, թուրքական իշխանությունները որոշ դեպքերում Զեյթունի նկատմամբ խիստ զգոն քաղաքականություն էին վարում՝ ջանալով տեղի չտալ ուժգին հուզումների, որոնք կարող էին հանգեցնել աննկուն լեռնականների ապստամբությանն ու զինված պայքարին։ Բացառված չէր, որ այդ դեպքում Զեյթունի օրինակին կհետևեին գոնե Լեռնային Կիլիկիայի որոշ շրջաններ, և այդ պարագային Զեյթունը կդառնար ռազմական

---

3 Դեսպան Մորգենթաուի..., էջ 178։

4 Մշակ, 31. VII. 1913։

5 Դեսպան Մորգենթաուի..., էջ 295։

ճամբար, որի դեմ կառավարությունը ստիպված կլիներ կանոնավոր զորքեր հանել և ծանր պատերազմ մղել։ Ուստի անհավանական չէ, որ հնարավոր այս ամենն ի նկատի ունենալով էլ Թուրք ջարդարարներն իրենց քստմնելի ծրագրի իրագործումը սկսեցին Զեյթունից։

1914 թ. հուլիսի 21-ին Թուրքիայում զորահավաք է սկսվում, սակայն զեյթունցիներն աշխատում են խուսափել զինվորագրությունից, քանզի «ամեն ինքնահաճ հայ պիտի նախընտրեր մեռնել, քան կռվել ի նպաստ Թուրքիոյ»[6]։ Նուտով իթթիհատի կողմից Մարաշի կառավարիչ է նշանակվում «թունդ ազգայնամոլ, հայատյաց Ալի Հայտար անունով մեկը՝ միմիայն Զեյթունը կործանելու նպատակով»[7]։

Օգոստոսի կեսերին Հայդար Ալին մեկ վաշտով Մարաշից շարժվում է Զեյթուն։ Տեղեկանալով այդ մասին՝ գյուղաքաղաքի վերնախավը որոշում է հարգանոք գիմավորել փաշային և հնարավորին չափ գոհացնել նրան։ Ժամանելով Զեյթուն՝ Ալի Հայդարը պահանջում է հանձնել դասալիքներին և զենքերը։ Սա, անկասկած, հետապնդում էր Զեյթունը կռվող ուժից զրկելու նպատակը։ Կ. Պոլսի Հավեն պատրիարքին հասցեագրված նամակում Կիլիկրայի Սահակ կաթողիկոսն իրազեկորեն նկատում է, որ «կառավարիչը (նկատի ունի Հայդար Ալուն—Ի. Դ.) զինվորական հրամանատարին հետ համախորհուրդ, քանի մը դասալիքներ պատճառաբանելով, կը պատրաստե զսպողական անլուր միջոց մը»[8]։ Ապա սկսվում են բռնությունները, խոշտանգումները, ձերբակալությունները՝ զենքը հանձնելու պահանջով։ «Շատերը կը ստիպվին գաղտնի զենք գնել և տալ, որ խոշտանգումեն ազատին»[9]։ Զեյթունցիների մոտ գտնվող մարտիսի սիստեմի 200 հրացաններից բռնագրավել էին 150-ը, ինչպես նաև բազմաթիվ որսորդական հրացաններ։ Իսկ բնակչության նկատմամբ կիրառվող բռնությունները գնալով ավելի խստանում և վայրագ բնույթ էին ստանում, որոնք, անտարակույս, իրականացվում էին բնակչությանն «ընդդիմության մղելու և այդպեսով զայն ապստամբած ներկայացնելով՝ զինվորական նվաճումի մը ձեռնարկելու չարաղետ ու հայրենադավ միտումներով»[10]։ Հ. Մորգենթաուի վկայությամբ, «թուրքական իշխանությունները անհավատալի դաժանությամբ են վերաբերվում Զեյթունի և Մարաշի հայ ազգաբնակչությանը. հիմնվելով մի քանի դասալիքների արարքների վրա, նրանք տարագրում են անմեղ բնակչության մի զգալի մասը»[11]։

Այս անկասելի հետևանքներով հղի իրադրության պայմաններում Զեյթունը պառակտված էր երկու մասի։ Վերնախավի մի մասն առաջարկում էր հնազանդվել կառավարությանը, իսկ մյուս մասը փրկությունը տեսնում էր միայն ինքնապաշտպանության մեջ։ Ի վերջո որոշվում է առաջնորդվել կաթողիկոսարանից ստացված հրահանգներով, այն է՝ հնազանդվել։ Մի կողմից Մարաշից Զեյթուն ժամանած հայ պատվիրակները, մյուս կողմից՝ Սսի և Կ. Պոլսի հոգևոր առաջնորդները հորդորում էին ենթարկվել, տեղի չտալ հուզումների, քանզի «Զեյթունի որդեգրելիք դիրքը կարևոր էր բովանդակ հայ ժողովրդի լինելիության տեսակետեն ալ»[12]։ Զեյթունի՝ սպիտակ դրոշ պար-

---

6 Տ. Անդրեասյան, Զեյթունի անձնատվությունը և Սուլտան ինքնապաշտպանությունը, Կահիրե, 1915, էջ 9։

7 Հ. Մ. Պողոսյան, Զեյթունի պատմությունը 1409—1921 թթ., Երևան, 1969, էջ 383։

8 Յ. Լեփսիուս, Հայաստանի ջարդերը, Կ. Պոլիս, 1919, էջ 12։

9 Դր. Հ. Գալուստյան, Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զեյթուն, Նյու Յորք, 1934, էջ 172։

10 Կիլիկիո կսկիծներ։ Վավերագրեր Կիլիկիո կաթողիկոսական դիվանեն, 1903—1915, Բեյրութ, 1927, էջ 115։

11 H. Morgenthau, Mémoires Suivis de Documents Arédits du Département d' Etat, Préface de Yerand Chaliand, Paris, 1984, p. 349—350.

12 Լ. Նորաշխարհյան, Զեյթունը 1914—1921 թթ. (հուշեր), Երևան, 1984 թ., էջ 13։

զելու մեջ մեղքի իր մեծ բաժինն ունի Սահակ կաթողիկոսը, որը երկյուղում էր, թե զեյթունցիների անհնազանդության դեպքում տեղահանության վտանգը կսպառնա իր ողջ համայնքին։ Օսմանյան իշխանությունները Կիլիկիայի կաթողիկոսի միջոցով հայտարարեցին, որ եթե զեյթունցիները դիմադրեն, ապա դաշտավայրում ապրող նրանց ազգակիցների վրա ճնշում կգործադրվի, մինչդեռ եթե նրանք ենթարկվեն և հանձնեն զենքերը, թե՛ իրենց, թե՛ դաշտեցիներին հանգիստ կթողնեն։ Ուստի Զեյթունի առաջնորդների մեծ մասը «որոշել էին դիմել ամեն ինչի՝ խաղաղությունը պահպանելու համար»[13]։ Անգլիական պառլամենտի անդամ Ջ. Բրայսը նշել է, որ թուրքերը «վախեցրին Կիլիկիայի 75-ամյա ծերունի կաթողիկոսին, որ եթե զեյթունցիները չհանձնվեն՝ նրանք կկոտորեն ողջ հայ բնակչությունը»[14], միաժամանակ նրան հավատացնելով, որ հնազանդության դեպքում Կիլիկիայում ջարդեր և տեղահանություններ տեղի չեն ունենա։ Ուստի «Համաձայն կաթողիկոսի թախանձագին խորհրդի, զեյթունցիները, կարծելով, թե կատարում են իրենց հայրենանվեր պարտքը, ցած դրեցին զենքերը՝ հայրենակիցներին փրկելու համար։ Նույնն արեցին նաև Դյորթ-Ցոլի ու Հասան-Բեյլիի բնակիչները»[15]։

Զեյթունցիների այսօրինակ դիրքորոշումը գործողությունների ազատություն է պարգևում թուրքերին. տեղի են ունենում «անն՛ախընթաց անգթություններ, խժդժություններ, ...բարբարոսություններ միայն այն նպատակով, որ ժողովուրդը հուզվի և ինքնապաշտպանության դիմե, որպեսզի առիթ ընծայե բնաջնջման»[16]։ Կառավարությանը ենթարկվելը, զեյթունցիներն արդեն դա ըմբռնել էին, նշանակում էր ենթարկվել անլուր տառապանքների, անգութ ջարդերի, ապստամբությունն էլ նշանակում էր մինչ այդ չտեսնված պայքար, որին Զեյթունն անպատրաստ էր։ Սակայն նույն Զեյթունի հերոսական անցյալի փառավոր փորձն ապացուցում էր, որ փրկության հնարավոր միակ միջոցն այդ էր։

Իր նպատակներին առավել հեշտությամբ հասնելու համար Ալի Հայդարը ձերբակալում է Զեյթունի վերնախավի հայտնի և հարգարժան անձանց, այդ թվում՝ 1895—1896 թթ. հերոսամարտի կազմակերպիչներից մեկին, գյուղաքաղաքի քաղաքագլուխ Նազարեթ Չտուշին, և ուղարկում Մարաշ, որով և գլխատում է գավառակի հայությունը՝ նրան զրկելով իր առաջնորդից։ Ձերբակալվում են 320 հայեր, որոնց մեծ մասը բանտում սպանվում է։ Հուզումը և շփոթությունը գնալով ահագնանում է։ Բռնությունները տարածվում են նաև գավառակի հայկական գյուղերում։

Զեյթունը գլխատելուց հետո թուրքերն առավել վայրագորեն են սկսում վերաբերվել խաղաղ և աշխատավոր ժողովրդի հետ։ Դասալիքների հարազատները ստորացուցիչ պատիժների էին ենթարկվում։ Նրան բռնաբարությունների բազմաթիվ դեպքեր։ «Խոշտանգում, ծեծ, հալածանք աներևակայելի թափով կշատնան և կտարածվին բոլոր շրջանակներուն մեջ։ Ոչ ոք կհամարձակի նույնիսկ բառ մը արտասանել օրվա կացության շուրջ։ Ամեն ոք ստիպված էր երեկոյան ժամը հինգեն հետո քաշվիլ իր տունը։ Կամայական քաղաքն ու գյուղերը։ Խավարին հետ ամեն օր կիջնե սարսափն ու վիշտը՝ հայ տներեն ներս»[17],—ցավով հիշում է դեպքերի ականատես Լ. Նորաշխարհյանը։

Այլևս համբերության բաժակը լցված էր։ Իր պատվախնդրությանն ու ազատությանը հետամուտ զեյթունցին այլևս անկարող էր դիմանալ այն կեղեքումներին և անպատվություններին, որոնց ենթակա էր արդեն մի քանի

---

[13] The Treatment of Armenians in the Ottoman Empire 1915—1916. Documents Presented to Viscount Grey of Falladon, by Viscount Bryce, London. 1916, p. 468

[14] The Times, 25. VII. 1916.

[15] Նույն տեղում։

[16] Կիլիկիո կսկիծներ, էջ 146։

[17] Լ. Նորաշխարհյան, նշվ. աշխ., էջ 31։

ամիս։ «Հայտնի էր, թե Զեյթունցիին խրոխտ հոգիին մեջ կուտակվող պատվի ու վրեժխնդրության զգացումները օր մը պիտի պայթեին հանկարծ»[18]։ Եվ Զեյթունի երիտասարդությունը Եղիա Նորաշխարհյանի (Ենիտունյան), Փանոս Զադրյանի, Մեսրոպ Զոլագյանի և Խաչիկ Յազուպյանի գլխավորությամբ նախապատրաստվում է ինքնապաշտպանության։ Սակայն Զեյթունի վերնախավի ճնշող մեծամասնությունը կարծելով, որ միայն կույր հնազանդությամբ կարելի է կանխել կամ գոնե առժամանակ հեռացնել փոթորիկը, ցանկանում է կասեցնել թափ առնող շարժումը, վիժեցնել ինքնապաշտպանության գործը։ Զեյթունի նոր քաղաքագլուխ Հայկ Ասմբնյանի մատնությամբ ձերբակալվում են 60 հոգի, բայց պայքարի կողմնակիցները չեն վհատվում։ Զենք և զինամթերք ձեռք բերելու նպատակով նրանք 1915 թ. փետրվարի 17-ին Ալապոզան գյուղից ոչ հեռու գտնվող Կյուրետինի կիրճում հարձակվում են թուրքական ոստիկանական ջոկատի վրա, պարտության մատնում և տեր դառնում հակառակորդի զենքին։ Ապա Եղիա Նորաշխարհյանն իր զինակիցներով որոշում է ապաստանել Զեյթունի վանքում և պարզել «ապստամբության դրոշը»[19]։

Վերահաս բռնկման առաջն առնելու համար Զեյթուն է գալիս Ալի Հայդարին փոխարինած Մուսթաֆա Ահմեդ Մյութմազը՝ 2000—3000 զինվորներով։ Միաժամանակ 3000 զինվորով, Հալեպից Զեյթունի վրա է արշավում Ֆահրի փաշան, և զորքերի ընդհանուր թիվը գյուղաքաղաքում հասնում է 10.000-ի[20]։ Նման մեծաքանակ կանոնավոր բանակի Զեյթուն գալը, վկայում է զեյթունցիների դիրքի նկատմամբ կառավարության ունեցած անհանգստության և վախի մասին։ Իսկ երկպառակությունը զեյթունցիների միջև գնալով խորանում էր և հենց դա էր պատճառը, որ միշտ միասնական Զեյթունն այս անգամ խոնարհեց իր խրոխտ գլուխը։ Զեյթունի վերնախավի մեծ մասը, ինչպես ասվեց, այն թյուր և սխալ կարծիքին էր, որ միայն հավատարմություն և կատարյալ հնազանդություն ցույց տալով կարելի պիտի ըլլա փրկել քաղաքն ու ընտանիքները»[21], չըմբռնելով, որ նման դժնդակ և անագորույն պայմաններում գոյատևման միակ հնարավորությունը կենաց ու մահու պայքարի մեջ էր։

Մեկ-երկու հաջող և հաղթական ընդհարում ունենալով թուրքական ոստիկանական ուժերի հետ, Եղիայի խումբը (թվով 32 մարդ) իջնում է լեռներից և ամրանում Պերզնկա լեռան ստորոտում գտնվող վանքում։ Դա նպատակ էր հետապնդում ողջ Զեյթունով մեկ պարզել ապստամբության դրոշ, ոգևորել և երիտասարդությանը ոտքի հանել զինված պայքարի ու ինքնապաշտպանության։ Սակայն այդ հույսերը, ցավոք, չիրականացան։ Ինքնապաշտպանության անօգտակարության մասին վերնախավի միտքը ներարկվել էր զեյթունցիներից շատերի մեջ և դարձել համոզմունք։ Մյուս կողմից՝ զինվորական հրամանատարությունը շոայլ խոստումներ էր տալիս, թե դասալիքներին և «խռովարարներին» գերելուց հետո զորքը կհեռանա, որ Զեյթունին և նրա գավառակին ոչինչ չի սպառնում։ Իսկ Զեյթունի հայությունը, որը դեռ միամտություն ուներ հավատալու թուրքերին, գտնվում էր մոլոր և շփոթ վիճակում։ Այս ամենը քայքայեց Զեյթունի միասնությունը և այն հորդորները, թե՝ Կիլիկիայի հայությանը բնաջնջման սպառնալիքի առաջ չկանգնեցնելու համար անհրաժեշտ է ենթարկվել կառավարությանը՝ պատճառ հանդիսացան քաղաքական անհեռատեսության և իրադարձությունների թոհուբոհում ոչ ճիշտ կողմնորոշման, որի հետևանքով էլ երիտասարդությունը չաջակցեց վանքում ապաստանածներին։

---

18 Տ. Անդրեասյան, նշվ. աշխ., էջ 15։

19 Լ. Նորաշխարհյան, նշվ. աշխ., էջ 34։

20 Ազետ և վերածնունդ, Փարիզ, 1952, էջ 30։

21 Զեյթունի պատմագիրքը, Բուենոս Այրես, 1960, էջ 661։

Ուժերը խիստ անհավասար էին։ «Մեկ կողմե արդիական զենքերով կազմակերպված բանակ մը կար, մյուս կողմե՝ 40 անձնազոհ քաջեր միայն քանի մը «մավզեր» և չադմագլը հրացաններով»[22],—հիշում է Լ. Նորաշխարհյանը։ Մարտի 14-ին թուրքական ուժերն անցնում են հարձակման։ Կես ժամանընդմեջ շարունակվում է վանքի ռմբակոծումը, սակայն մի բուռ հայ հերոսները, հմտորեն դիրքավորված, մնում են անվնաս։ Թուրքերը, քաջալերվելով և կարծելով, թե վանքի պաշտպանները կամ զոհվել են, կամ փախուստ տվել, անցնում են հարձակման։ Բայց շուտով իրար են հաջորդում հայ քաջորդիների պատասխան համազարկերը։ Թշնամին բազմաթիվ զոհեր տալով նահանջում է։ Որոշ ժամանակ անց թուրքերը վերադասավորում են իրենց ուժերը և պատրաստվում նոր գրոհի։ Երկրորդ հարձակումը տեղի է ունենում հազարապետ Սուլեյմանի գլխավորությամբ։ Չնայած հայ պաշտպանների դիպուկ կրակոցներին, թուրքերին այս անգամ հաջողվում է գրավել վանքի մատույցներում գտնվող այգիները և ընդհուպ մոտենալ վանքի պարիսպներին ու հայ քաջերի գրաված դիրքերին։ Սակայն վերջիններիս հաջողվում է բուռն, կատաղի ու սրընթաց գրոհով ջախջախել և հետ շպրտել թշնամուն։ Ահեղ մարտում սպանվում է և հազարապետ Սուլեյմանը։ Այս կրկնակի անհաջողությունից հետո թուրքական հրամանատարությունը զորանոցից բերված խոշոր տրամաչափի թնդանոթով և մի քանի հրանոթներով սկսում է ռմբակոծել վանքը։ Գիշերը, օգտվելով մթության քողից, Եղիա Նորաշխարհյանի խումբը հեռանում է վանքից՝ բարձրանալով լեռները[23]։ Եթե հավատ ընծայենք Զեյթունի բողոքական քարոզիչ Տ. Անդրեասյանի տեղեկություններին, ապա 12 ժամ տևած ընդհարման ժամանակ հայերը տալիս են ընդամենը 1—2 վիրավոր, թուրքերը՝ 101 սպանված և 110 վիրավոր[24]։ Այս կռվի մասին Լոնդոնի «Թայմս» թերթը գրել է. «Զեյթունում գտնվող թուրքական զորքերը, որոնք կազմում էին 5000 մարդ, հարձակման անցան, կորուստներ տալով հետ մղվեցին, իսկ գիշերն ըմբոստները թողեցին ճամբարը»[25]։

Հեռանալով վանքից՝ ըմբոստների մի խումբը քաջաբար մաքառում է Ֆընտըճագի հերոսամարտում, մյուս մասը մինչև 1918 թ. զինադադարը մնում է հայրենի լեռներում՝ բազմիցս հաղթական մարտեր մղելով թուրքական գերակշիռ կանոնավոր ուժերի և թուրք խուժանի դեմ։ Նրանց նույնիսկ մի քանի անգամ հաջողվում է անսպասելի ու վճռական հարձակումներով փրկել տարագրյալ հայերին, որոնք նույնպես ապաստանում են Զեյթունի անմատչելի լեռներում[26]։

Վանքի ընդհարումից հետո կառավարությունը ձեռնամուխ եղավ բնակչության տարագրությանը, վստահ իր ուժերին, քանզի գյուղաքաղաքի քաջարի պաշտպաններն արդեն հեռացել էին, իսկ ժողովուրդը, նոր ըմբոնելով տեղի ունեցածի իմաստը և իրերի, դեպքերի զարգացման իրական ընթացքը, մատնվեց ծայր հուսահատության։ Մարտի 26-ից (ապրիլի 7-ից) թուրքերը սկսում են տեղահանել զեյթունցիներին[27]։ Ապրիլին տարագրության սարսափներով և արհավիրքներով լի ճամփան են բռնում Զեյթունի Պոզպայրի, Գարըկլար և Միջին թաղերի բնակիչները։ Նույն ժամանակահատվածում տեղահանվում են նաև գավառակի Արեգին, Ալապողան, Գոչող, Ղուրա, Հա-

---

22 Լ. Նորաշխարհյան, նշվ. աշխ., էջ 15։

23 Վանքի կռվի մասին մանրամասն տե՛ս Հ. Մ. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 394—396, Լ. Նորաշխարհյան, նշվ. հուշերը, էջ 38—41, Տ. Անդրեասյան, նշվ. աշխ., էջ 19—20, Զեյթունի պատմագիրքը, էջ 668—669։

24 Տ. Անդրեասյան, նշվ. աշխ., էջ 20։

25 The Times, 25 VII. 1916.

26 Ս. Գ. Աղայան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, 1973, էջ 424։

[7]Armenian Martyrs Day April 24 San Francisco, 196 , p. 12.

ճիտերե, Կոսճուղաս, Սյունե, Քյոմե-Սյոյուա, Ֆենկ, Ֆոնուզ, Շիվիլիկ գյուղերը։ Մայիսի կեսին բռնագաղթի են ենթարկվում գյուղաքաղաքի և գավառակի վերջին 400 ընտանիքները[28]։ 1915 թ. հունիսի 11-ին բուլղարահայ թեմի առաջնորդ Տուրյանը Ֆիլիպեից Ամենայն հայոց կաթողիկոսին հաղորդում է. «Զեյթունի և շրջակայից հայությունը, ինչպես անշուշտ իմացած եք, այժմ ամբողջովին տեղափոխված է, մեկ մասը Հալեպեն անդին Զոր (Դեր էլ-Զոր—Ռ. Գ.) գավառը և մյուս մասը (իբր 1000 ընտանիք) Գոնիայի Սուլթանիե գյուղաքաղաքը, ուր կմնան այսօր մերկ, անոթի և անպատսպար։ Տեղը ճախճախուտ ըլլալով համաճարակ հիվանդություն արդեն սկսած են կոտորածներ ընել անոնց մեջ»[29]։

Զեյթունի և գավառակի բռնագաղթի ենթարկված 30.000 հայությունից ավելի քան 8000-ը աքսորվեց Կոնիա, իսկ մնացածը՝ Դեր էլ-Զոր։ Կիլիկիայի Սահակ կաթողիկոսն անսփոփ վշտով և կսկիծով նշում է, որ ավելի քան 20.000 զեյթունցիներ «մղեղի նման ցրված են արաբներուն մեջ»[30]։ Տարագրությունը տեղի էր ունենում ամենատաժանելի և դժոխային պայմաններում, որոնք միտումնավոր ստեղծում էին թուրք չարդարարները։ Բավական է նշել միայն, որ Պողանթիից Ադանա ընկած ճանապարհին՝ Դարա-Փունար կոչվող վայրում, զեյթունցի տարագրյալներից օրական 150—200 մարդ էր մահանում[31]։

Զեյթունի հայության տարագրությունից հետո թուրքական կառավարությունը ձեռնամուխ է լինում Լեռնային Կիլիկիայի մնացած բնակավայրերի հայության տեղահանությանը։ Զեյթունի հետ տեղի ունեցավ Դյորթ-Յոլի բռնագաղթը։ Հետևելով Կիլիկիայի կաթողիկոսի և հայ քաղաքական որոշ անհեռատես ուժերի խորհուրդներին, Դյորթ-Յոլը, որը մինչ այդ անպարտելի և անմատչելի էր թուրքական զորքերի համար, այս անգամ տեղի տվեց, որի արդյունքը եղավ բնակիչների ամբողջական գաղթն ու գյուղի ավերումը։ Առաջին հերթին ձերբակալվեցին և դաժան դատաստանի ենթարկվեցին «այն հայերը, որոնց անունները գրանցված էին որպես 1909 թ. կոտորածի ժամանակ ինքնապաշտպանության դիմածներ, կամ ովքեր որ զենք ունեին կամ որևէ այլ մեղադրանք էին կրում»[32]։ Մայիսի 5-ից հունիսի 6-ը մասնակի չարդերի իրականացումով տարագրվում է Դյորթ-Յոլի և շրջակայքի 22.000 հայությունը, որից անմիջապես հետո ամբողջ շրջանը բնակեցվում է թուրքերով[33]։

Վերոհիշյալ դեպքերից հետո չարդերը տարածվում են նաև Կիլիկիայի վարչատնտեսական կենտրոն Ադանայում, որտեղ թուրքերը հայերի հանդեպ ցուցաբերում էին այն նույն վերաբերմունքը, ինչ 1909 թ. կոտորածներից առաջ[34]։ Ինչպես այլուր, այնպես էլ Ադանայում երիտթուրքերն առաջին հերթին տարագրեցին և ոչնչացրին մտավորականությանը, ազգային գործիչներին, հայտնի քաղաքացիներին ու ազդեցիկ անձանց։ Յո. Լեփսիուսն իրավացիորեն նկատել է, որ այդ «համընդհանուր միջոցը» նպատակ ուներ հայ ժողովրդին զրկել իր առաջնորդներից, որպեսզի տեղահանությունը հնարաջոր լիներ իրականացնել առանց աղմուկի և դիմադրության, որ նախքան հայ

---

28 Հ. Մ. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 397։

29 ՀՀ կենտրոնական պետական պատմության արխիվ (այսուհետև՝ ՀՀ ԿՊՊԱ), ֆ. 57, ց. 5, գ. 96, թ. 29։

30 Կիլիկիո կսկիծներ..., էջ 176։

31 The Treatment of Armenians, p. 470.

32 Նույն տեղում, էջ 505։

33 A. J. Toynbee, Armenian Atrocities. The Murder of a Nation, London, 1915, p. 99.

34 Նույն տեղում, էջ 80։

ժողովրդի առանձին հատվածների ոչնչացումը ցանկանում էին գլխատել նրան[35]։

1915 թ. սեպտեմբերի առաջին շաբաթին բռնագաղթվեց քաղաքի հայության 2/3-ը։ «Ժուռնալ դե Ժենևը» 1915 թ. սեպտեմբերի 9-ին տպագրած հաղորդագրությամբ հավաստում է, որ Ագանայի ամբողջ շրջանը մաքրված է հայերից[36]։ Հալեպում գերմանական հյուպատոս Վ. Ռյոսլերի հեռագրի համաձայն (1915 թ. մայիսի 26) Ագանայի վիլայեթից և արևելյան շրջաններից տարագրված հայ ընտանիքների թիվը հասնում էր 10.000-ի[37]։ Վերջինս միաժամանակ նշում էր, որ երիտթուրքական կառավարությունը նպատակ ունի ոչնչացնել այդ շրջանի ողջ հայությանը[38]։ Տարագրության և կոտորածների ենթարկվեց քաղաքի և հարակից շրջանների մոտ 38.000 հայությունը[39]։ Թուրքիայում Գերմանիայի դեսպան Վանգենհայմը 1915 թ. հուլիսի 7-ին ռեյխսկանցլերին ուղղած հաղորդագրության մեջ վկայում էր, որ Ադանայի վիլայեթի մի շարք շրջաններում տարագրությունն արդեն իրականացվել է, և այն մեթոդները, որով այն տեղի է ունեցել, ապացուցում են, որ կառավարությունը մտադիր է ոչնչացնել հայ ազգը[40]։

Տեղահանելով հայերին՝ թուրքերը տարագրության ճանապարհին գործի էին դնում ոչնչացման ապարատի բոլոր պտուտակները. գաղթախմբերի վրա էին հարձակվում թուրք խառնամբոխը, կանոնավոր բանակի զորամասերը, հատուկ ստեղծված ավազակախմբերը, ոստիկանությունը, քրդական ուժերը, իսկ պակասը լրացնում էին ճանապարհի դժվարությունները, անապատային տաժանելի պայմանները, սովը, հիվանդությունները[41]։ Նկարագրելով թուրքերի սահմռկեցուցիչ վայրագությունները, գազանաբարո հաշվեհարդարները, կանանց և երեխաների սպանությունները, Հ. Գիբբոնսը դառը հեգնանքով գրում էր, որ վերջիններս, այնուամենայնիվ, վտանգ էին ներկայացնում Օսմանյան կայսրության համար, իսկ ԱՄՆ-ում Թուրքիայի դեսպանը ցինիկորեն հայտարարում էր, թե կանանց և երեխաների նկատմամբ բռնություններ երբեք չեն եղել[42]։

Հաճընի տարագրությունն իրականացնում է Ագանայի պատերազմական ատյանի (ռազմական դատարանի) նախագահ Ավնի բեյը։ Հաճընի երիտասարդությունը 1909 թ. օրինակով ցանկանում էր ինքնապաշտպանության դիմել, բայց «Տարեց և հեռատես մասը, սակայն, աչքի առջև ունենալով մեր տնտեսական ու ռազմական տկար պայմանները, մանավանդ տարագրության ահավոր հեռապատկերը, խոհեմություն կնկատեր ենթարկվել կառավարության հրահանգներուն և կարելի չափով զոհացնել Ավնի բեյը»[43]։ Այդ որոշման մեջ էր հաճընցիների ողբերգությունը։ Պարզ է, որ այստեղ ևս, ինչպես ամենուրեք, գործում է տարագրության և բնաջնջման նույն սխեման. զենքի բռնագրավում, դասալիքների հանձնում, հայերին պաշտպանության միջոցներից զրկում, տարագրության իրականացում՝ ճանապարհին տարագրվողների մեծ մասի կոտորումով։ Շվեյցարական «Բազլեր Նախրիխտեն» թերթի վկայությամբ տարագրության վերջնական կետերն էին հասնում

---

35 Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов под ред. М. Г. Нерсисяна, Ереван, 1982, с. 388.

36 The Treatment of Armenians. p. 503.

37 Ս. Լեփսիուս, նշվ. աշխ., էջ 76։

38 Պատմա-բանասիրական հանդես, 1986, № 2, էջ 35։

39 Геноцид армян..., с. 349.

40 Պատմա-բանասիրական հանդես, 1986, № 2, էջ 33։

41 A. J. Toynbee, Turkey. A Past and a Future. New York, 1919, p. 22.

42 Г. А. Гиббонс, Последние избиения в Армении, Пгр., 1916, с. 13.

43 Ս. Պ. Պողոսյան, Հաճընի ընդհանուր պատմությունը և շրջակա գոռան տարի հայ գյուղերը, Լոս-Անջելես, 1942, էջ 589։

բռնագաղթի ենթարկվածների ընդհանուր թվի 1/4-ից էլ քիչ մասը[44]։ Այսպիսով, փրկության միակ հույսը և հնարավորությունը կարող էր լինել լոկ ինքնապաշտպանությունը՝ զինված դիմադրության միջոցով։ Վանի, Ուրֆայի, Մուսա լեռան, Շապին Կարահիսարի, Սասունի և այլ վայրերի ինքնապաշտպանական մարտերն ապացուցում են, որ գոյատևման հնարավորությունը միայն դրա մեջ էր, քանզի ինքնապաշտպանության դիմած բոլոր վայրերի հայության գոնե չնչին մասը կարողացել էր փրկվել թուրքական յաթաղանին զոհ գնալուց։

Ապստամբության բարձրացման կեղծ մեղադրանքով Հաճընում ձերբակալվում են հնչակյան կուսակցության 35 անդամ։ Սա Հաճընն իր առաջնորդներից զրկելու առաջին քայլն էր։ Հայերին զինաթափելուց մոտ 20 օր անց Հաճընն է մտնում Զեյթունի հայությանը տարագրող Շահրի փաշան։ Նա իր զորքերը տեղավորում է եկեղեցիներում ու հայկական դպրոցներում, ձերբակալում Հաճընի առավել ազդեցիկ, հարուստ և տեղի հայության շրջանում մեծ հեղինակություն վայելող 200 հայի՝ դրանով իսկ փաստորեն գլխատելով քաղաքի հայությանը։ Կարճ ժամանակում տարագրվում է Հաճընի 35.000 հայությունը՝ «Ձեր էլ Զորի կիզիչ սվազուտներում լորցնելով իր մեծ մասին»[45]։ Գ. Պալաքյանի տվյալներով հաճընցիներից կենդանի են մնում ընդամենը 350 մանուկներ և ծերեր[46], քանզի «Հաճընի հետ վարվեցին շատ ավելի անգթորեն թե՛ վտարման ընթացքում և թե՛ ճանապարհին»[47]։

Հաճընի հայության հետ դատաստան տեսնելուց հետո երիտթուրքերն անմիջապես ձեռնամուխ են լինում Կիլիկիայի տնտեսական և մշակութային խոշոր կենտրոններից մեկի՝ Հալեպի վիլայեթում գտնվող Այնթապի շուրջ 30 հազար հայության տեղահանությանը[48]։ Հուզումն ու անագորույն ապագայի հանդեպ վախը ծագում է ապրիլի 20-ին, երբ Այնթապ է հասնում գաղթական զեյթունցիների առաջին քարավանը։ Աղետը պայթեց հունիսի 15-ին, երբ կառավարությունն ազդարարեց, թե Այնթապի հայերը, ռազմական անհրաժեշտությունից ելնելով, «երեք ամսով պետք է տեղահանվեն»[49]։ Ընդամենը երկու օր անց՝ հունիսի 17-ին, խումբ առ խումբ սկսվում է այնթապցիների տեղահանությունը, որը շարունակվում է մի քանի ամիս։ Հուլիսի 28-ով թվագրված և վեհափառին ուղղված նամակում հաղորդվում է. «Այնթապի և Քիլիսի գաղթը սկսված է. Այնթապեն ելած առաջին երկու քարավանները բոլորովին կողոպտված են»[50]։ Հայ ժողովրդի անկեղծ բարեկամ Ֆ. Նանսենի վկայությամբ՝ Այնթապի վերջին 5000—6000 հայությունը տարագրվեց 1916 թ. հունվարին։ Իսկ 1916 թ. ապրիլին 14.000 այնթապցիներ վայրագորեն սրի քաշվեցին Ռաս Ուլ-Այնում։ Նույն աղբյուրը նշում է, որ օրական 300—500 հայեր գետի ափին խողխողվում էին թուրք բարբարոսների կողմից[51]։

Քրդերի, թուրք խուժանի և ոստիկանական խմբերի կողմից հարձակման, կոտորածների և բռնագաղթի են ենթարկվում Այնթապի հայ գյուղերը։ Ականատեսներից մեկը հիշում է, որ «ճամբու դժվարությունները, հոգեկան և ֆիզիկական տառապանքը այնպիսի վիճակի մը վերածած էին զիրենք (հայ

---

44 Геноцид армян..., с. 361.

45 Ց. Պ. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 593։

46 Գ. Պալաքյան, Հայ Գողգոթան. դրվագներ հայ մարտիրոսագրութենե, Ա հատոր, Վիեննա, 1922, էջ 311։

47 The Treatment of Armenians, p. 503.

48 Գ. Պողարյան, Ցեղասպան թուրքը։ Վկայություններ քաղված հրաչքով փրկվածներու զրույցներեն, Բեյրութ, 1973, էջ 120։

49 Նույն տեղում, էջ 122։

50 ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 96, թ. 32։

51 F. Nansen. The Near East and Armenia, London, 1928. p. 308.

տարագրյալներին—Ռ. Գ.), որ անկարելի էր երիտասարդը պառավեն զանազանել»[52]։

1915 թ. դարնանը թուրքական կառավարությունը ձեռնարկեց նաև Մարաշ քաղաքի և սանջակի հայ բնակչության (առանց Զեյթունի՝ մոտ 32.000)[53] տեղահանությունը։ Սկզբում ձերբակալվում են Մարաշի ազդեցիկ հայերը։ Ջ. Բրայսը նշում է, որ Մարաշում ավելի քան 300 հայեր «մահապատժի են ենթարկվել զինվորական դատարանի կողմից»[54]։ Ուսուցիչ Քեշիշյանի վկայությամբ Մարաշի բանտում 650 հայ բանտարկյալներին Ջեմալ փաշայի հրամանից հետո «2—3 օրվա ընթացքին... այլատեսակ մահերով մեռցուցին-լմնցուցին»[55]։ Միաժամանակ Մարաշում անմիջապես սկսվում են վայրենի կոտորածները և ահասարսուռ չարդերը։ Ականատեսներից մեկը հիշում է. «Մարաշի ամերիկյան դպրոցներից մեկում ես տեսա ամենաանհավանական ձևով խեղված 100-ից ավելի կանանց և երեխաների (առանց ձեռքերի և ոտքերի) և նրանց մեջ՝ 1—2 տարեկան երեխաների։ Մահմեդական ամբոխին զվարճացնելու համար ոստիկանները կրակում էին այլանդակված դիակների վրա»[56]։

Մայիսի 2-ին տեղահանվում է Մարաշի հայության առաջին քարավանը՝ 2000 տարագրյալներից բաղկացած։ Հաջորդ ամիսների ընթացքում ամբողջ սանջակը կոտորածների և բռնագաղթի միջոցով «մաքրվում» է հայերից։ Օգոստոսի 7-ին սկսվում է Մարաշի զանգվածային գաղթը։ Առանց ուտեստի և հագուստի (տեղական իշխանություններն արգելել էին որևէ բան վերցնել) Մարաշի հայությունը ոտք է դնում գողգոթայի ճանապարհը։ Օգոստոսի 14-ին գնդակահարվում են 34 հայեր, այդ թվում՝ 12-ամյա երկու տղաներ։ Հաջորդ օրը գնդակահարվում են ևս 24 հոգի[57]։

Հալեպում գերմանական հյուպատոս Վ. Ռյոսլերի 1916 թ. մայիսի 12-ի հեռագրից տեղեկանում ենք, որ Ջեմալ փաշայի հրամանով տեղի է ունեցել Մարաշի վերջին 3000 հայերի բռնագաղթը և եղեռնը, քանզի վերջիններս «դավադրություն» էին կազմակերպել երիտթուրքերի կառավարության դեմ[58]։ Զարմանալի է, որ դեռ պատրվակ էր փնտրվում Մարաշի հայության վերջին բեկորի սպանդի «արդարացման» համար։

1915 թ. ապրիլ-հունիս ամիսներին հիմնականում իրականացնելով Կիլիկիայի հայության խոշոր կենտրոնների (Ադանա, Մարաշ, Հաճըն, Այնթապ, Զեյթուն և այլն) և հարակից շրջանների հայերի ցեղասպանությունը, երիտթուրքական կառավարությունը եռանդագին ձեռնամուխ է լինում Կիլիկիայի մնացած վայրերի հայության տեղահանությանն ու չարդերին։ Այսպես, հուլիսի 27-ին թուրքական ոստիկանությունը բռնագաղթի ենթարկեց Կիլիկիայի ծովափնյա բնակավայրերի և Անտիոքի հայ բնակչությանը, իսկ հուլիսի 28-ին սկսվեց Քիլիսի հայության տարագրությունը[59]։ Թուրքական 6000 բարբարոսներից բաղկացած զորամասը ներխուժում է Սիս, դաժան հաշվեհարդար տեսնում հայ բնակչության հետ. մի մասին կոտորում, իսկ մյուս մասին տեղահանում՝ ենթարկելով անլուր չարչարանքների[60]։

Որոշ բնակավայրերում թուրք հրոսակներն ամբողջովին ոչնչացրին հայերին։ Այսպես, Ալպիսթանից ոչ հեռու ընկած Բյովերեն գյուղում սրի քաշվեց

52 Աղետ և վերածնունդ, էջ 40։

53 Մշակ, 31. VII. 1913։

54 The Treatment of Armenians, p. 23.

55 Գր. Հ. Գալուստյան, նշվ. աշխ., էջ 775։

56 Геноцид армян, с. 318.

57 Նույն տեղում։

58 Ст. Степанян, Армения в политике империалистической Германии, Ереван, 1975, с. 129.

59 Հուշամատյան մեծ եղեռնի (1915—1965), Բեյրութ, 1965, էջ 46։

60 Մ. Քելեշյան, Սիս-Մատյան, Բեյրութ, 1949, էջ 569։

ողջ բնակչությունը։ Պատահականության քմահաճույքով կենդանի մնաց միայն 12-ամյա մի տղա։ Մարաշի սանջակի Գյուրուն գյուղից տեղահանված 2800 թշվառները Ինկուզեկ տաղ կոչվող կիրճում կողոպտվեցին թուրք խուժանի կողմից։ Արյան ծարավին հագուրդ տալու համար թուրքերը սպանեցին 200 հոգու, 70 ծանր վիրավորներ մնացին տեղում[61]։ 1915 թ. ապրիլի 7-ի թվակիր նամակում Սահակ կաթողիկոսը Զավեն արքեպիսկոպոսին հաղորդում է, որ կրակի է մատնվել Օսմանիե գյուղաքաղաքը, որի բնակչությանն արդեն սկսել են տարագրել։ Ապրիլի 8-ին նույն անձնավորությանը հղած նամակում նա տեղեկացնում է. «Սուետիո և Քեսապի այրերը Այնթապի կողմերը իջեցուցած են. կասկած կա Տեր Զոր ղրկելու»[62]։ Հալեպի գերմանական դպրոցի ուսուցիչ Մարտին Նիպահեն վկայում է, որ եթե բռնագաղթի ենթարկված խմբերը բաղկացած էին 2000—3000 հոգուց, ապա որոշված վայրերն էին հասնում ընդամենը 200—300-ը[63]։

Տեղահանվում է նաև Հալեպի վիլայեթի հայ բնակչությունը (Ալպիսթանից, Գյոքսունից, Անտիոքից, Թաշոլուկից, Կեբենից, Շիվիլիկից և այլն)։ Անմեղ զոհերը ենթարկվում էին անմարդկային տանջանքների, հոգեկան և ֆիզիկական անլուր տառապանքների, մարդկային արժանապատվությունը ստորացնող անթիվ բռնություններ։ «Աշխարհում չկա այնքան հարուստ և պերճախոս լեզու, որպեսզի կարողանա նկարագրել այն սարսափները, որպեսզի պատկերի ֆիզիկական և հոգեկան այն տառապանքները, որ կրեցին այդ անմեղ տառապյալները»[64]։ «Փաստորեն «տեղահանություն» կոչվածը» մեծ քանակությամբ մարդկանց հետ գործ ունենալու դեպքում աստիճանական ջարդերի արդյունավետ միջոց էր... ավելի դաժան՝ քան կոտորածը գնդակի կամ սվինի միջոցով»[65]։ Ամերիկայի հայոց հոգևոր առաջնորդ Վեհունուն հղած նամակում Զավեն պատրիարքը նշում է, որ Կիլիկիայի տեղահանված հայերը, մի քանի ամիս ճանապարհին գտնվելով, հազարներով մահացել են սովից և հիվանդություններից[66]։ Տարագրյալներից այլընտրանք կար միայն կանանց համար, եթե վերջիններս ընդունեին մահմեդականություն և ամուսնանային թուրքերի հետ, սակայն նման շատ քիչ փաստեր են հայտնի[67]։

Հայերին կոտորում էին տարբեր մեթոդներով. այրում էին կենդանի, գնդակահարում, դաշունահարում, կապում միմյանց և ցած շպրտում բարձրությունից, նետում էին ջրհորները, մորթազերծ անում, տրորում ձիերի սմբակների տակ, թաղում կենդանի, իսկ «թուրք ժողովրդիս թույլատրված էր ամեն տեսակ վարմունք և հայ աքսորյալները ենթարկվում էին անոր քմահաճույքին և ոչ մեկ բան զիրենք կը պաշտպաներ»[68]։

Եվ այսքանից հետո, 1916 թ.հունվարի 10-ին Աբդուլահագ Նուրին տարագրյալների հարցերի կարգադրման ընդհանուր հանձնաժողովին հաղորդում էր. «Քննություններ կատարված ըլլալով կը հաստատենք, որ ընդհանուր բռնագաղթի ենթակա հայոց հազիվ թե տասը առ հարյուրը հասած են իրենց համար որոշված վայրերը։ Մնացածը մեռած է բնական պայմաններով, ինչպես են անօթություն և հիվանդություն»[69]։ Անտարակույս, «բնական պայմաններ» էին կոտորածները, զանգվածային ջարդերը, ցեղասպանությունը։ Բա-

---

61 Геноцид армян..., с. 319.

62 Կիլիկիո կսկիծներ, էջ 144—145, 155։

63 Геноцид армян..., с. 326.

64 J D. Morgan, Contre les Barbares ie Orient. Etudes sur la Turquie, Paris 1918. p. 183.

65 The Times, 25. VII. 1916.

66 Геноцид армян..., с. 342.

67 Armenian Mar yrs Day, April 24, p. 12.

68 Աղետ և վերածնունդ, էջ 107։

69 Հուշամատյան մեծ եղեռնի, էջ 531։

վակուն է նշել, որ միայն Եփրատի ափին գտնվող Մեսքենե դաղթակայանում սրի քաշվեց 55.000 մարդ։ Անցնելով Դեր էլ Զորից մինչև Մոսուլ ընկած 350 կմ տարածությունը՝ 19000 հայերից կենդանի մնացին ընդամենը 2500-ը[70]։ Նկարագրելով գաղթակայաններում գտնվող հայ մանուկներին, ականատեսը հիշում է, որ «նրանք չէին կարող խոսել, այլ երբ ուզեին պոռալ, տեսակ մը կոկորդային աղաղակ կ'արձակեին, որ ոչ մեկ մարդկային ձայնի կը նմաներ»[71]։

Միայն 1915—1916 թթ. Օսմանյան Թուրքիայում երիտթուրքերի կողմից իրականացված ցեղասպանության 1,5 միլիոն զոհերից մոտ 250.000—300.000-ը կազմում էին կիլիկիահայերը։ Ցո. Լեփսիուսը, որը սխալմամբ կիլիկիահայության թիվը հաշվում էր 250.000, նշում է, որ նրանցից կենդանի մնացին ընդամենը 4000-ը[72]։

Անչափելի էին նաև նյութական և հոգևոր կորուստները։ Մոխիքների մեջ կորան հոյակերտ կոթողներ, հայ ժողովրդի հոգևոր կյանքի անկրկնելի դոհարներ։

Կիլիկիայի բազմաթիվ վայրերում հայերը դիմում էին ինքնապաշտպանության՝ օրհասական պայքար մղելով իրենց բնաջնջելու ելած թուրք չարդարների դեմ։ Հայտնի է Ֆրնտրճագի մեկօրյա հերոսական, բայց միաժամանակ և ողբերգական ինքնապաշտպանությունը։ Օգոստոսի 1-ից սեպտեմբերի 14-ը թուրքական կանոնավոր զորամասերին և խուժանին Տիգրան Անդրեասյանի և Եսայի Ցաղուբյանի գլխավորությամբ անօրինակ դիմադրություն են ցույց տալիս Սուեդիայի հայերը, որոնք, ամրանալով Մուսա լեռան բարձունքներին, անկոտրում վճռականությամբ և անընկճելի համառությամբ հետ են մղում թշնամու բազմիցս գերակշիռ ուժերի անընդհատ կրկնվող գրոհները՝ դրանով իսկ կռելով իրենց փրկությունը։ Մուսա լեռան օրինակը հավաստում է, որ թուրք ոճրագործների դեմ հաջողության կարելի էր հասնել միայն կազմակերպված համառ դիմադրության միջոցով։ Մուսալեռցիներն իրենց փրկությամբ և հաղթանակով ապացուցեցին, «որ ազատությունը խեղդողների դեմ պետք է պայքարի ելնել թեկուզ փոքրաթիվ ուժերով, նույնիսկ այն դեպքում, երբ այդ պայքարը խիստ անհավասար է»[73]։

## ГЕНОЦИД АРМЯН В КИЛИКИИ 1915—1916 гг.

Р. Г. ГАСПАРЯН

### Резюме

Преследуя политические цели пантюркизма, желая «решить» Армянский вопрос, используя удобную ситуацию, сложившуюся в результате первой мировой войны, младотурецкое правительство решило истребить армян. Геноцид начал осуществляться повсеместно на территории всей Турции, как в Западной Армении, так и во всех армянонаселенных местностях империи.

В начале 1915 г. младотурецкое правительство депортировало 400. 000 киликийских армян. В течение нескольких месяцев были депортированы и истреблены все армяне Зейтуна, Мараша, Хаджина. Сиса, Аданы, Айнтапа и других районов. Жертвами резни стали более 250. 000 киликийских армян.

В ряде районов Киликии, в частности в районе горы Муса, армяне организовали мощную самооборону, которая увенчалась успехом. Это показало, что спасение армянского народа возможно было только посредством вооруженной борьбы.

[70] J. Guttman. The Beginnings of Genocide, New York, 1948. p. 9—10.

[71] Աղետ և վերածնունդ, էջ 82։

[72] Ց ո. Լ ե փ ս ի ու ս, նշվ. աշխ., էջ 135։

[73] Ռ. Գ. Ս ա հ ա կ յ ա ն, Ցեղասպանության պատմությունից, Երևան, 1990, էջ 190։